ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ

Կ Ա Ր Գ Ա Դ Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն

4 փետրվարի 2019թ. թիվ 26

ՎԱԼԻԿՈ ՉԱԼԱԲՅԱՆԻ ՆԿԱՏՄԱՄԲ
ԿԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ ՏՈՒՅԺ ԿԻՐԱՌԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն Հայաստանի Հանրապետության Աշխատանքային օրենսգրքի 223-րդ հոդվածի 1-ին կետի 1-ին ենթակետի, ղեկավարվելով «Կառավարչական իրավահարաբերությունների կարգավորման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 11-րդ մասի 3-րդ կետով, հիմք ընդունելով ՀՀ Լոռու մարզի դատախազ, արդարադատության երկրորդ դասի խորհրդական Ա.Մարտիրոսյանի 18.12.2018թ. գրությունը և հաշվի առնելով «Ստեփանավանի բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի տնօրեն Վալիկո Չալաբյանի 10.01.2019թ. բացատրությունը՝

Կ ա ր գ ա դ ր ու մ եմ.

1. Առողջապահական ընկերության կանոնադրությամբ իրեն վերապահված լիազորությունները ոչ պատշաճ կատարելու համար «Ստեփանավանի բժշկական կենտրոն» ՓԲԸ-ի տնօրեն Վալիկո Չալաբյանի նկատմամբ կիրառել «նկատողություն» կարգապահական տույժը:

2. Մարզպետարանի առողջապահության և սոցիալական ապահովության վարչության պետին՝

«Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով սույն վարչական ակտը եռօրյա ժամկետում հանձնել հասցեատիրոջը՝ ստորագրությամբ առձեռն հանձնելու միջոցով:

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ

Invalid signature

X

ԱՆԴՐԵՅ ՂՈՒԿԱՍՅԱՆ

Ա.ՂՈՒԿԱՍՅԱՆ

2019թ. փետրվարի 4
ք.Վանաձոր